ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

3 մայիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

60
(2910)

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓՈԽԱՐԵՆ՝ ՀԱՄԱԼԻՐ ՇԵՆՔ



Մայիսի 1-ին Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը եւ «Ռենշին» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Էդուարդ Մարությանը ստորագրել են Համաշխարհային առեւտրի կենտրոն (WORLD TRADE CENTER (WTC) կառուցելու քաղաքաշինական կառուցապատման ծրագրի իրականացման պայմանագիր:

Կնքվել է նաեւ մեկ այլ եռակողմ պայմանագիր՝ ՀՀ կառավարության, «Ռենշին» ՍՊԸ-ի եւ «Հայփոստ» ՓԲԸ-ի կողմից, որով կստեղծվի «Համաշխարհային առեւտրի կենտրոն Երեւան» փակ բաժնետիրական ընկերությունը:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 210 մլն ԱՄՆ դոլար:

Ծրագրով նախատեսվում է ստեղծել կոնֆերանս դահլիճներ՝ միջազգային ֆորումների, գագաթնաժողովների եւ այլ միջոցառումների իրականացման համար. մշակութային հարթակ՝ համերգասրահ, ցուցասրահներ ժամանակակից արվեստագետների համար, EXPO սրահ, գործարար կենտրոն՝ նոր ստարտափների, նախաձեռնությունների եւ գործարար ակտիվություն ծավալելու համար: Զբոսաշրջության նոր լոկացիա՝ այս վայրը կձեւափոխվի հյուրերի հետ շրջանցման ենթակա վայրից այցելության համար պարտադիր վայրի: Ստացվում է, որ Սարյան 22 հասցեում գտնվող «ՀայՓոստ»-ի շենքի փոխարեն՝ Սարյան եւ Պարոնյան փողոցների միջնամասում կստեղծվի մեծ համալիր շենք:

Հիշեցնենք, որ «Ռենշին» ՍՊԸ-ն գտնվում է ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի հովանավորության ներքո: Թեպետ ինքը՝ Գրիգորյանը չի հաստատում այդ լուրերը, սակայն «Ռենշին» ՍՊԸ-ի հետ պարբերաբար կնքած պայմանագրերը այլ բան են փաստում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավորները ԱԺ քառօրյա նիստերից առաջ ֆրակցիայի փակ նիստ են արել, որին մասնակցել է նաեւ ՀՀ երկրորդ նախագահ, «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը: Պատգամավորները երկրորդ նախագահի հետ քննարկել են երկրում ստեղծված իրավիճակը, մասնավորապես՝ Տավուշում սահմանազատման եւ սահմանագծման անվան տակ տեղի ունեցող գործընթացները: Ռոբերտ Քոչարյանը «Հայաստան» խմբակցության պատգամավորներին ասել է, որ ակտիվ լինեն թե՛ խորհրդարանում, թե՛ փողոցային պայքարում: Տեղեկությունը մեզ հետ զրույցում հաստատեց նաեւ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը՝ նշելով, որ երկրորդ նախագահի հետ հանդիպումները պարբերական բնույթ են կրում, իսկ վերջին հանդիպումը տեղի է ունեցել ապրիլի վերջին. «Ապրիլի 26-ին մեր ֆրակցիան նիստ է արել, որին մասնակցել է նաեւ «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը, քննարկվել են կարեւոր հարցեր՝ երկրում ստեղծված իրավիճակը եւ մեր անելիքները»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Օհանյանը:



ՔՊ-ական պաշտոնյաները արդեն աստղաբաշխական գումարներ են ստանում օտարերկրյա ֆիրմաներից: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Թալինի քաղաքապետ Տավրոս Սափեյանը իր հայտարարագրի «նվերներ» բաժնում գրել է, որ 2023 թվականի ընթացքում Twins Buick Gmc ֆիրմայից ստացել է 49.9 հազար ԱՄՆ դոլար: Նվիրատուն, ըստ երեւույթին, գործունեություն է ծավալում Ավստրալիայում: Ինչի համար է նվեր ստացել քաղաքապետը, ինչ ծառայության դիմաց՝ անհասկանալի է:




ԲԴԽ նախագահ, ՔՊ-ական Կարեն Անդրեասյանի խնդրահարույց եւ աչառու պաշտոնավարումը հայտնվել է Freedom House իրավապաշտպան կազմակերպության զեկույցում: Կազմակերպությունն արձանագրել է, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանի պաշտոնավարումն ուղեկցվել է մի քանի դատավորների նշանակման ու ազատման վիճահարույց որոշումներով: Freedom House-ը մասնավորապես մտահոգիչ է համարել այն, որ կարգապահական խիստ միջոցներ են կիրառվում այն դատավորների նկատմամբ, որոնք կասկածի տակ են դրել Բարձրագույն դատական խորհրդի անկախությունը, կամ էլ որեւէ կերպ փոխկապակցված են նախկին իշխանությունների հետ. մինչդեռ այն դատավորները, որոնք համերաշխ են ՔՊ-ի հետ, կատարում են նրանց հրահանգները, խրախուսանքների են արժանանում: Կազմակերպությունը նկատում է՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից անձեռնմխելիության ստուգման բացասական արդյունք ստացած եւ քաղբանտարկյալներին դատապարտելու պատմություն ունեցող Մնացական Մարտիրոսյանի նշանակումը Երեւանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ՝ առաջացրել է Հայաստանի իրավապաշտպան հանրության արձագանքը: Իրավապաշտպան կազմակերպությունը իր զեկույցում մտահոգիչ է համարել նաեւ այն, որ Հայաստանում կալանքը, որպես խափանման միջոց, հաճախ է կիրառվում. «Չնայած նրան, որ 2021 թվականից ի վեր Հայաստանը որդեգրել է խափանման այլընտրանքային մեթոդներ՝ ինչպիսիք են տնային կալանքը եւ պաշտոնանկությունը, բայց նախնական կալանքը մնում է ամենատարածված պրակտիկան եւ կիրառվում է մի շարք ընդդիմադիր գործիչների նկատմամբ»,-ասվում է զեկույցում:

ԶՐՈՒՅՑ

# «ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ԵՐԿԻՐ ՂԵԿԱՎԱՐԵԼՈՒ». Ս. ՕՀԱՆՅԱՆ

**«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի հետ՝ Տավուշում կատարվող վերջին իրադարձությունների առնչությամբ:**



-Պարո՛ն Օհանյան, երեկ Նիկոլ Փաշինյանը Հանրային հեռուստատեսության եթերում հարցազրույց տվեց եւ, անդրադառնալով քաղաքացիների այն մտահոգություններին, որ սահմանագծումից հետո Կիրանցում կառուցվող դպրոցը անմիջապես թշնամու նշանառության տակ է լինելու, ասաց. «Եթե խնդիրն այն է, որ դպրոցականները ադրբեջանցիներին առերեսվելու մտահոգություն ունեն, ապա այդ հատվածներում կարող ենք պատ կառուցել կամ ծառ տնկել: Այսինքն՝ ըստ նրա, որեւէ անվտանգային խնդիր չկա, եւ միակ հարցը առերեսվելն է: Ինչպե՞ս կմեկնաբանեք դա:

-Նախ պետք է հասկանանք հետեւյալը. այն գործընթացը, որն այսօր իրականացվում է Տավուշի մարզում, հեռու է սահմանազատում կամ սահմանագծում անվանվելուց եւ այն սկզբունքներից ու հաջորդականություններից, որոնք արտահայտվում են միջազգային փորձում. դա պարզապես տարածքների միակողմանի զիջում է, քանի որ, եթե խոսք է գնում սահմանազատման եւ սահմանագծման մասին, ապա հիմքում պիտի դրված լինի ԵԱՀԿ՝ 2017 թվականի քարտուղարության փաստաթուղթը, որում հստակ նշված են թե՛ սկզբունքները, թե՛ հաջորդականությունը: Նախ՝ հաջորդականության համաձայն սկզբում պիտի լինի սահմանազատում, որը իրականացվում է քարտեզների վրա եւ ամբողջական: Մենք Ադրբեջանի հետ այսօր մոտ հազար կիլոմետր երկարությամբ սահման ունենք, եւ սահմանազատումը պետք է իրականացվի ողջ երկայնքով: Այն չկա, քանի որ չկա նաեւ համաձայնություն, թե որոնք են այդ քարտեզները, քանզի սահմանագծման եւ սահմանազատման հանձնաժողովները չունեն իրենց աշխատանքային կանոնակարգը. այն դեռ նոր պետք է հաստատվի:

Երկրորդը՝ իրականացվում է սահմանագծում: Հատվածական սահմանազատում եւ սահմանագծում իրականացնելը, եւ այն, որ երկու հանձնաժողովների հայտարարության մեջ նշվում են ժամկետներ, փաստում է այն, որ արագացված տեմպով է սահմանագծումն իրականացվում: Կարծում եմ, որ վերոնշյալ ժամկետները դրել է Ադրբեջանը: Այդ մասին մատնում է նաեւ Նիկոլ Փաշինյանի այն արտահայտությունը, որ եթե սահմանազատման եւ սահմանագծման չգնանք, ապա չգիտենք, թե մեր անվտանգության հարցով ինչ խնդիրներ կառաջանան: Ըստ ԵԱՀկ փաստաթղթի՝ սահմանազատման եւ սահմանագծման արդյունքը չի կարող հիմք հանդիսանալ՝ հետագա լարվածության, անկայունության եւ նոր սադրանքների, քանի որ ԽՍՀՄ ժամանակ պետությունների միջեւ սահմաններն այնպես են գծվել, որ ամբողջական վերահսկողություն իրականացնելը հնարավոր լինի, իսկ եթե չստացվի այդ վերահսկողությունը, լարվածություն առաջանալու դեպքում իրավիճակի կառավարումն իրականացնի սովետական միությունը:

ԵԱՀԿ փաստաթղթի համաձայն՝ ամենակարեւոր սկզբունքներից մեկն այն է, որ գծվելիք սահմանը չի կարող հանդիսանալ ապագա լարվածության եւ անկայունության հիմք: Հետեւաբար, այս սկզբունքի վրա հիմնվելով, առաջին հերթին Ադրբեջանը պետք է դուրս գա այն տարածքներից, որոնք զավթել է Հայաստանից. 200-ից ավել քառակուսի կիլոմետրի մասին է խոսքը: Իսկ այսօր, եթե անգամ սահմանազատում ու սահմանագծում է իրականացվում, պետք է հաշվի առնվեն առաջին հերթին բնական արգելքներն ու բնագծերը, որոնք աշխարհագրական արգելք են հանդիսանում երկու կողմերից լարվածության նախաձեռնման համար: Ամենակարեւորն այս դեպքում (ինչի մասին իշխանությունները չեն մտածել) այն է, որ պետք է իրավիճակ ստեղծվի, որում հարեւան պետությունները չեն մտածի ռազմական գործողությունների մասին, քանի որ, հակառակ դեպքում, կարող են անդառնալի կորուստներ ունենալ:

Հիմա Նիկոլ Փաշինյանն ինչու՞ է շտապում, քանի որ ինքն է չէ՞ ասում, որ եթե չտանք, ապա Ադրբեջանը պատերազմ կսկսի:

Նա ղեկավար լինելու իրավունք չունի, որովհետեւ այս երեքուկես տարիները լիարժեք չի օգտագործել՝ իր երկիրը ագրեսիային նախապատրաստելու համար: Ագրեսիայի նախապատրաստման ոլորտներ գոյություն ունեն, որոնց թվում են տնտեսությունը, արտաքին եւ ներքին քաղաքականությունը, բայց ամենակարեւորը՝ զինված ուժերի կիրառման պլանի նախապատրաստումն է: Հիմա մենք ունենք նոր իրողություն, այդ նոր իրողությունը պիտի համապատասխանեցվի մեր ռազմական դոկտրինին եւ ռազմավարությանը, ապա նախապատրաստվի բանակը: Բանակը պիտի կազմահաստիքային փոփոխության ենթարկվի եւ արագ տեմպերով համալրվի, որպեսզի պատրաստ լինի իր առջեւ դրված խնդիրն իրականացնելու:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԼՈՒՐԵՐ

## ԻՆՉ Է ՊԱՏՄԵԼ Լ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԸ

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լեւոն Քոչարյանի օգնական Արթուր Սուքոյանը մինչ կալանավորվելը տեսաուղերձում պատմել է մանրամասներ civic.am-ի լրագրող Դավիթ Լեւոնյանի հետ տեղի ունեցած միջադեպից: Տեսանյութում նա ասում է, որ լրագրողը վերջին ժամանակաշրջանում աչքի է ընկել եկեղեցուն վարկաբեկելու իր «առաքելությամբ», որը իր համար անընդունելի է: Սուքոյանը փորձել է դա բացատրել Լեւոնյանին:

«Մոտեցա ու ասացի, որ երբ թիրախավորում են եկեղեցին եւ արշավ են սկսում եկեղեցու դեմ, դա ինձ համար, որպես հայ ու որպես քրիստոնյա անընդունելի է: Նրան ասացի, որ երբ մարդը պիղծ բաներ է վերագրում եկեղեցուն եւ հոգեւորականներին, դա բարոյազուրկ պրոցես է», - տեսանյութում ասում է Արթուր Սուքոյանը:

Ըստ Սուքոյանի՝ ի պատասխան, Դավիթ Լեւոնյանը մեղադրանքներ է հնչեցրել իր նկատմամբ՝ ինչին էլ ի պատասխան Արթուրը հարվածել է լրագրողին:

«Այո, ես հարվածել եմ նրան, նա ընկել է գետնին: Գետնին ընկած ժամանակ իրեն չեմ խփել, չեմ մոտեցել: Նա սկսեց ինչ-որ բաներ գոռալ, բայց ես սադրանքներին չեմ տրվել, իրեն չեմ մոտեցել, ոչ մի ավելորդ բան չեմ արել: Ես խփելուն էլ կողմ չեմ, բայց երբ մարդիկ կարմիր գծերը անցնում են, դա ինձ համար չափազանց ցավոտ է: Անընդունելի ինձ համար, որ հայ առաքելական եկեղեցին թիրախավորված է, ու հատկապես՝ հայերի կողմից, Հայաստանի Հանրապետությունում»,-նշում է նա:

Արթուր Սուքոյանը տեղեկացնում է նաեւ, որ, ի վերջո, չի կարողացել բացատրել լրագրողին, թե ինչու է վիրավորված իր ասածներից:

Ապրիլի 30-ին Արթուր Սուքոյանի եւ Civic.am լրատվամիջոցի լրագրող Դավիթ Լեւոնյանի միջեւ վիճաբանություն էր եղել Ազգային ժողովի շենքի տարածքում, Սուքոյանը հարվածել է լրագրողին: Ըստ տեղեկությունների՝ Սուքոյանին զայրացրել է լրագրողի հրապարակումը՝ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի մասին: Մայիսի 2-ին քննչական կոմիտեն հայտնեց, որ Արթուր Սուքոյանը կալանավորվել է:

## ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՆԻՄԱՍՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Մայիսի 1-ին Հանրային հեռուստաընկերության եթերից ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով ընդդիմության պնդմանը, որ Կիրանցի կառուցվող դպրոցն Ադրբեջանի սահմանից լինելու է չնչին հեռավորության վրա եւ լինելու է դիտարկվող, ինչը նշանակում է, որ այն չի կարող լինել անվտանգ, պատասխանեց. «եթե երեւալու խնդիր է, ես ասել եմ՝ կարող ենք ծառ տնկել, կարող ենք պատ կառուցել, եթե երեւալու խնդիրն է»:

Վարչապետի այս հայտարարությունը շատ մարդկանց վրդովմունքն է առաջացրել: ArmLur.am-ը կապ հաստատեց քաղաքագետ Ստեփան Դանիելյան հետ՝ մեկնաբանություն ստանալու նպատակով, որն էլ ասաց. «Իր ասածը ապուշություն է, որը քննարկման ենթակա չէ»:

## ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Ապրիլի 30-ին Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Հասմիկ Տոլմաջյանը բանախոսի կարգավիճակով մասնակցեց Ֆրանսիայի Ազգային ժողովում «Le Laboratoire de la Republique» ուղեղային կենտրոնի կողմից կազմակերպված՝ «Արեւելքում ժողովրդավարության աշխարհաքաղաքականությունը. Հայաստան, Իսրայել եւ Քրդստան» խորագիրը կրող համաժողովին: Այս մասին հայտնում են Ֆրանսիայում ՀՀ դեսպանությունից:

Միջոցառմանը որպես բանախոսներ մասնակցում էին նաեւ Ֆրանսիայի Ազգային կրթության հարցերով նախկին նախարար, «Le Laboratoire de la Republique» ուղեղային կենտրոնի նախագահ Ժան-Միշել Բլանքերը, Ֆրանսիայի Ազգային ժողովում Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Անն-Լորանս Պետելը, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի փոխնախագահ Սարահ Թանզիլին, Ֆրանսիա-Իսրայել բարեկամության խմբի նախագահ Մաթյո Լըֆեվրը, Իսրայելում Ֆրանսիայի նախկին դեսպան Էրիկ Դանոնը, գրող եւ աշխարհաքաղաքագետ Ֆրեդերիկ Անսելը, գրող, տարածաշրջանի հարցերով փորձագետ Պատրիս Ֆրանչեսկին եւ լրագրող, Հետախուզական հետազոտություն ֆրանսիական կենտրոնի փորձագետ Տիգրան Եգավյանը:

Իր խոսքում դեսպան Տոլմաջյանը շնորհակալություն հայտնեց նախկին նախարար Բլանքերին՝ Ֆրանսիայի Ազգային ժողովում Հարավային Կովկասում եւ Մերձավոր Արեւելքում ժողովրդավարությանը նվիրված համաժողովի կազմակերպման համար:

Խոսելով Հայաստանի շուրջ տեղ գտած աշխարհաքաղաքական վերջին զարգացումներից՝ Հայաստանի դեսպանը շեշտեց, որ աջակցելով ժողովրդավար Հայաստանին ընդդեմ ավտոկրատական երկրների դաշինքների՝ Եվրոպան ոչ միայն պաշտպանում է իր դավանած արժեքները եւ սկզբունքները, այլ նաեւ իր շահերը: Այս համատեքստում, դեսպան Տոլմաջյանը համաժողովի մասնակիցներին ներկայացրեց Հայաստանում ժողովրդավարության առաջմղման, ինչպես նաեւ տարածաշրջանում խաղաղության հասնելու ուղղությամբ Հայաստանի կառավարության կողմից գործադրվող ջանքերը:

Համաժողովին ներկա էին Ֆրանսիայի ազգային ժողովի պատգամավորներ, Սենատի անդամներ, լրագրողներ, ուսանողներ, գիտական եւ փորձագիտական շրջանակների, հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ:

## ՈՒԺ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Երեկ կառավարության հերթական նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը խոսել է ոստիկանության բարեփոխումների մասին: Նա Նշել է, որ ոստիկանությունը ուժ գործադրելու լեգիտիմ իրավունք պետք է ունենա: «Եթե չունենա այդ իրավունքը, ոստիկանությունը, ընդհանրապես՝ որպես ծառայություն, կդառնա անիմաստ: Այլ բան, որ պետք է ունենանք շատ հստակ ստանդարտներ».- ասաց Փաշինյանը:

## ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄ Է ՖՐԱՆՍԻԱՅԻՆ

Ֆրանսիայի Ներքին գործերի եւ Անդրծովյան տարածքների հարցերով նախարար Ժերալդ Դարմանեն ելույթ է ունեցել ու անդրադարձել Ադրբեջանի վարած քաղաքականությանը:

«Ադրբեջանը փորձում է օգտագործել Նոր Կալեդոնիայի հարցը՝ ոչ ի պաշտպանություն այս կամ այն ժողովրդի, եւ ոչ էլ հանուն ժողովրդավարական սկզբունքների: Դրա համար, նախեւառաջ, հարկավոր է, որ Ադրբեջանն ինքը ժողովրդավարական սկզբունքների կրող լինի, ինչը մեզ համար ամենեւին ակնհայտ չէ: Այսկերպ, Ադրբեջանն ընդամենը փորձում է հակադարձել Ֆրանսիային, որը, ի պատիվ իրեն, պաշտպանում է հայերին»:

## ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՆ ԱՄՆ-ՈՒՄ ԵՆ

Հայաստանի Հանրապետության ԱԺ Հայաստան-ԱՄՆ բարեկամական խմբի անդամները՝ բարեկամական խմբի ղեկավար, ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւ դեսպան Լիլիթ Մակունցը մայիսի 1-ին Վաշինգտոնում հանդիպել են ԱՄՆ Կոնգրեսի Հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ Ֆրենկ Փըլլոնի եւ հանձնախմբի անդամ Ջիմ Կոստայի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը զրուցել են տարածաշրջանային զարգացումներից, ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը ԱՄՆ աջակցությունից եւ Հայաստանի տնտեսական դիմակայունության ամրապնդման եւ ժողովրդավարական բարեփոխումների ընթացքից:

## ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ, Իրանի ԶՈՒ էլիտար զորքեր) կառուցողական դեր է խաղում ահաբեկչության դեմ պայքարում: Այս մասին հայտնել է Իրանի արտաքին գործերի նախարար Հոսեյն Ամիր-Աբդոլլահիանը եվրոպական դիվանագիտության ղեկավար Ժոզեպ Բորելի հետ չորեքշաբթի երեկոյան ունեցած հեռախոսազրույցում:

Բորելը Աբդոլլահիանին ասել է, որ ԵՄ-ն չի ձգտում լարվածության Իրանի հետ հարաբերություններում:

Եվրադիվանագիտության ղեկավարը Եվրամիության խորհրդի ապրիլի 22-ի նիստի արդյունքների հիման վրա հայտարարել է, որ միության երկրները հասել են քաղաքական համաձայնության՝ իրանական հրթիռների եւ անօդաչուների արտադրողների դեմ պատժամիջոցների ընդլայնման մասին: ԵՄ խորհրդի կողմից այդ որոշման պաշտոնական ձեւակերպումից հետո Բրյուսելը կկարողանա նոր պատժամիջոցներ մտցնել Թեհրանի դեմ:

ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՋԱՆՔԵՐ

# ԱՄՆ ՆԱԽԱՏԵՍԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՉ Է

**ԱՄՆ 66 կոնգրեսական Ներկայացուցիչների պալատի հատկացումների հանձնաժողովի ղեկավարներին կոչ են արել 200 միլիոն դոլար հատկացնել արցախցի փախստականներին, ընդլայնել ԱՄՆ ռազմական օգնությունը Հայաստանին, դադարեցնել ռազմական եւ անվտանգային բոլոր հատկացումները Ադրբեջանին եւ ուսումնասիրել Ադրբեջանի ռազմական հանցագործների նկատմամբ պատժամիջոցների կիրառման հարցը. այս մասին հայտնում է ԱՄՆ հայ դատի հանձնախումբը:**



Նամակն ուղարկվել է Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին գործողությունների գծով հատկացումների ենթահանձնաժողովի նախագահ Մարիո Դիաս-Բալարտին եւ պատգամավոր Բարբարա Լիին:

Ուղարկված նամակում կոչ է արվում 200 միլիոն դոլար տրամադրել Լեռնային Ղարաբաղից փախստականների համար, կասեցնել ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրամադրվող ռազմական եւ անվտանգային օգնությունը: Նամակով ԱՄՆ պետքարտուղարին կոչ է արվում գնահատել ադրբեջանական պաշտոնյաների դեմ հնարավոր պատժամիջոցներ կիրառելու հարցը: Բացի դրանից, կոչ է արվում 20 միլիոն դոլարի ռազմական ֆինանսավորում հատկացնել Հայաստանին, եւս 10 միլիոն դոլար՝ միջազգային ռազմական կրթության եւ ուսուցման համար: Նաեւ կոչ է արվում 10 միլիոն դոլար տրամադրել Հայաստանին իրավական բարեփոխումների համար եւ եւս 10 միլիոն դոլար՝ ժողովրդավարական բարեփոխումների համար:

«Մենք միանում ենք Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի ղեկավարության ու ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի ավելի քան վաթսուն գործընկերներին՝ պահանջելով Ադրբեջանին ԱՄՆ-ի ռազմական օգնության՝ վաղուց հասունացած արգելք, Ալիեւի ռեժիմի դեմ պատժամիջոցներ եւ Արցախից փախստականների համար ԱՄՆ-ի մարդասիրական օգնության զգալի ծավալ: Հաշվի առնելով, որ տասնյակ միլիարդավոր ամերիկյան դոլարներ են ուղարկվում աշխարհի ճգնաժամային գոտիներ, 20 միլիոն դոլարից պակաս գումարը, որը նախագահ Բայդենը նախատեսել է, բայց դեռ չի հատկացրել տեղահանված արցախահայությանը, իսկապես խայտառակություն է», - ասել է ANCA-ի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:

Կոչ անելով 200 միլիոն ԱՄՆ դոլարի օգնություն ցուցաբերել Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց՝ Ներկայացուցիչների պալատի անդամ Ֆրենկ Փալոնը եւ նամակի մյուս համահեղինակները նշել են, որ ԱՄՆ-ի եւ միջազգային հանրության արձագանքը Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ցեղասպանական էթնիկ զտմանը լիովին անբավարար է եղել՝ այդ ընտանիքների կենսական կարիքները բավարարելու համար: Հայրենիք վերադառնալու նրանց երաշխավորված իրավունքը չապահովելը նույնպես սեւ կետ է թողնում միջազգային դիվանագիտական հանրության հեղինակության վրա:

Նամակի համահեղինակները հատուկ մտահոգություն են հայտնել Հայաստանի դեմ նոր պատերազմ հրահրելու՝ Ալիեւի ռեժիմի մտադրությունների կապակցությամբ:

«Անվտանգության ոլորտում Հայաստանին լրացուցիչ օգնությունը օտարերկրյա ռազմական ֆինանսավորման եւ միջազգային ռազմական կրթության եւ վերապատրաստման տեսքով հատկապես կարեւոր է, քանի որ հայ ժողովուրդը միջազգային օգնություն է փնտրում իր ինքնիշխանությունը պաշտպանելու համար՝ ի դեմս ադրբեջանական մշտական ծավալապաշտության եւ տարածաշրջանում այլ ավտորիտար ռեժիմների կողմից հնարավոր սպառնալիքների: Այդ պատճառով մենք պետք է շարունակենք մեր ջանքերը՝ ապահովելու, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունները կայունանան»,- նշել են նրանք:

Բացի այս, Կոնգրեսի անդամները հերթական անգամ կոչ են արել դադարեցնել անվտանգության ոլորտում Ադրբեջանին ցանկացած ռազմական օգնության տրամադրումը՝ հայտարարելով, որ այդ երկրի նախագահ Իլհամ Ալիեւն իր ցեղասպանական գործողություններով կրկին ու կրկին ապացուցել է, որ տարածաշրջանում խաղաղության հասնելու ազնիվ միջնորդ չէ, եւ Միացյալ Նահանգները չպետք է անվտանգության ոլորտում որեւէ օգնություն հատկացնի նրա ռեժիմին:

ԱՄՆ օրենսդիրները քննադատել են ԱՄՆ պետքարտուղարությանն ու միջազգային կազմակերպություններին՝ Ադրբեջանի կառավարությանը մարդու իրավունքների խախտումների համար պատասխանատվության չենթարկելու համար:

«Վաղուց ժամանակն է, որ ԱՄՆ-ն լրջորեն մտածի պատժամիջոցներ սահմանելու մասին, որպեսզի նրանք (խմբ. ադրբեջանցի պաշտոնյաները) պատասխան տան միջազգային իրավունքի այս խախտումների համար»,- ասվում է նամակում:

*ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ԿԻՐԱՆՑԸ 2 ՄԱՍԻ ԵՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը հայտնեց, որ Կիրանցը բաժանում են 2 մասի: Պատգամավորը լրագրողներին ցույց է տալիս գյուղացիների վկայականները եւ բացատրում, թե ինչպես են սահմանազատման անվան տակ կիսելու գյուղը:

«Էս հատվածում էլ ծառեր են տնկելու, որ կիրանցեցին իրեն ապահով զգա»,-բարկացած ասում է պատգամավորը:

## ՊԱՅՔԱՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը անդրադարձել է երեկ առավոտյան Տավուշում կատարված դեպքերի մասին:

«Այն ինչ տեղի ունեցավ առավոտյան Կիրանցում, չի կարող տեղավորվել որեւէ հայի գլխում: Հսկայական ոստիկանական ուժեր՝ ընդդեմ իր տունը թշնամուց պաշտպանող հայի: Սա անպատկերացնելի դավաճանություն է: Պետության, պետականության, հանուն ինքնության եւ արժանապատվության այս պայքարն այլեւս առաքելություն է, որտեղ յուրաքանչյուր հայ ունի անելիք Հայաստանում եւ Սփյուռքում:

Որքան էլ փորձեր արվեն այլ դաշտ տեղափոխել այս պայքարը, որքան էլ ապօրինի բռնաճնշումներ լինեն, միեւնույնն է, պայքարը շարունակվում է»:

## ՀՀ 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ

ՊԵԿ պաշտոնական կայքում հրապարակվել է 2024 թ. հունվար-մարտ ամիսների՝ առաջին եռամսյակի ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի եւ վճարների վերաբերյալ տեղեկատվությունը: 1000 խոշոր հարկ վճարողների կողմից 2024 թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում պետական բյուջե ընդհանուր առմամբ վճարվել է ավելի քան 387 միլիարդ 109 միլիոն դրամ: Հարկային մարմին կատարված վճարումների գումարը կազմել է ավելի քան 329 միլիարդ 864 միլիոն դրամ, իսկ մաքսային մարմին կատարված վճարումների գումարը՝ ավելի քան 57 միլիարդ 244 միլիոն դրամ:

Հազար խոշոր հարկատուների 2024 թվականի առաջին եռամսյակի ցանկը գլխավորում է «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ» ընկերությունը, որի շրջանառությունը կազմել է 19 մլրդ 907 մլն դրամ: Սա հետաքրքիր փաստ է, քանի որ այս ընկերությունը, 2023 թվականի նույն ժամանակահատվածում հրապարակված տվյալների համաձայն, գտնվել է 7-րդ հորիզոնականում, իսկ շրջանառությունը կազմել է 5 մլրդ 339 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ՝ այս տարի մոտ 5 անգամ ավելի է եղել «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ» ընկերության ֆինանսական շրջանառությունը: «Գազպրոմ Արմենիան», «Գրանդ Տոբակոն» եւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը շարունակում են մնալ 1000 խոշոր հարկատուների առաջին հնգյակում՝ հաճախ միմյանց հորիզոնականներ զիջելով:

2024 թվականին 1000 խոշոր հարկատուների շարքում 5-րդ տեղում է «Փրիթի Ուէյ» կազմակերպությունը, որը 2022 թվականին 22-րդ հորիզոնականում էր՝ 8 մլն 520 հազար դրամ տարեկան հարկային մուտքերով: Նման կտրուկ աճը, ըստ երեւույթին, պայմանավորված է Հայաստանում տեխնիկայի շրջանում արտասահմանցի տուրիստների հետաքրքրությունից: Որպես փաստ արձանագրենք, որ ՀՀ 1000 խոշոր հարկատուների շարքում առաջին հնգյակը վերջին 2-3 տարիներին համալրում են տեխնիկայի եւ էլեկտրոնիկայի վաճառքով զբաղվող ընկերությունները:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

# ՕԳՆԱԿԱՆԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂԻ ՄԻՋԵՎ ՎԵՃԸ

**Շարունակվում է ապրիլի 30-ին ՀՀ Ազգային ժողովի բակում լրագրողի մասնագիտական գործունեությունը՝ առերեւույթ բռնության գործադրմամբ խոչընդոտելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:**





Այս մասին հայտնում են ՔԿ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից՝ նշելով, որ վարույթի շրջանակում իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել են էական մի շարք հանգամանքներ:

Միջնորդություն է հարուցվել դատարան՝ լրագրողի նկատմամբ բռնություն կիրառած անձի՝ պատգամավոր Լեւոն Քոչարյանի օգնական Արթուր Սուքոյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

«2024թ. ապրիլի 30-ին՝ ժամը 11:50-ի սահմաններում, Civik.am լրատվական գործակալության լրագրող Դավիթ Լեւոնյանը իր՝ լրագրողի մասնագիտական գործունեությունն իրականացնելու նպատակով, գտնվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի բակում, երբ նրան է մոտեցել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներից մեկի օգնական Ա.Ս.-ն, որը, վիրավորելով լրագրողին, պարզաբանում է պահանջել՝ Դ. Լեւոնյանի կողմից, որպես լրագրող, օրեր առաջ սոցիալական ցանցում տեսանյութ հրապարակելու կապակցությամբ: Ի պատասխան՝ Դավիթ Լեւոնյանը պարզաբանել է, որ ինքը լրագրող է, իր կողմից տարածված տեսանյութն իր՝ լրագրողի ազատ խոսքն է եւ անձնական կարծիքը: Խոսակցությունը վերաճել է վիճաբանության, որի ընթացքում Ա.Ս.-ն հայհոյել է լրագրողին եւ, իրեն ոչ ցանկալի տեսանյութեր տարածելուց հրաժարվելուն հարկադրելու դիտավորությամբ, ձեռքով հարվածել է վերջինիս դեմքին, ինչի պատճառով լրագրողը վայր է ընկել, իսկ նրա ձեռքին եղած տեսախցիկը վնասվել է:

Այնուհետեւ Ա.Ս.-ն, իր հանցավոր մտադրությունն ավարտին հասցնելու վճռականությամբ, շարունակել է լրագրողին տեղեկություն տարածելուց հրաժարվելուն հարկադրելու գործողությունները եւ հետագայում նմանատիպ տեսանյութեր չհրապարակելու սպառնալիքներ է հնչեցրել՝ այդ կերպ լրագրողի նկատմամբ բռնություն գործադրելով, խոչընդոտելով Դավիթ Լեւոնյանի՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ Ա.Ս.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 3-րդ մասով (բռնության գործադրմամբ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելը) հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Դատարան ներկայացնելու նպատակով՝ նրան ձերբակալելու որոշում է կայացվել, եւ տվյալ անձը ձերբակալվել է, ներկայացվել վարույթն իրականացնող մարմին:

Միջնորդություն է հարուցվել դատարան՝ վերջինիս նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական եւ վարութային գործողություններ՝ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով»,- ասվում է հաղորդագրության մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթը դեպքի առթիվ զրուցել է Լեւոն Քոչարյանի օգնական Արթուր Սուքոյանի հոր՝ նախկին դատավոր Ալեքսեյ Սուքոյանի հետ:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ

## ԴԱՏԱԼՍՈՒՄՆԵՐԸ ՀԵՏԱՁԳՎԵՑԻՆ

Հակակոռուպցիոն դատարանում՝ դատավոր Վահե Դոլմազյանի նախագահությամբ, հետաձգվեցին ՀՅԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի եւ մյուսների գործով դատալսումները:

Դատական նիստի մեկնարկին նախագահողը հայտնեց, որ մեղադրյալ Մարթա Սիմոնյանի պաշտպանի կողմից միջնորդություն է ներկայացվել, համաձայն որի՝ Սիմոնյանն առողջական խնդիրներ ունի, չի կարող ներկայանալ նիստին, ըստ այդմ՝ նիստը հետաձգվեց: Մինչ Արմեն Աշոտյանին ոստիկանության ծառայողները կուղեկցեին նիստերի դահլիճից դուրս՝ լրագրողները մի քանի հարց ուղղեցին՝ Կիրանցում տիրող իրավիճակի վերաբերյալ:

«Երեւանը պետք է ոտքի կանգնի, որ Կիրանցն իր նպատակին հասնի: Եթե Երեւանում փոփոխություններ չլինեն, մնացած բոլոր պայքարները, շատ գովելի են, բայց վերջնական արդյունքի բերող չեն»,- նշեց Աշոտյանը՝ հավելելով, որ ինքն ազատության մեջ լինելու դեպքում՝ կգտնվեր Տավուշում, բայց խնդիրը Երեւանում է լուծվում:

Հիշեցնենք, որ քրեական վարույթի շրջանակներում կալանքի տակ է ՀՅԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը: Արմեն Աշոտյանի նկատմամբ հնարավոր հետապնդում հարուցելու հարցը լայն տարածում ստացավ հատկապես նախորդ տարվա վերջերին, երբ ԵՊԲՀ նախկին ռեկտոր Միքայել Նարիմանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվեց՝ դեռեւս 2015 թ. համալսարանից խոշոր չափերի ենթադրյալ հափշտակության առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում: Դեռեւս այդ ժամանակ մամուլը գրել էր, որ Նարիմանյանին ձերբակալելու հիմնական նպատակն Արմեն Աշոտյանի դեմ ցուցմունք կորզելն էր: 2022թ. նոյեմբերի 16-ի կեսգիշերին Արմեն Աշոտյանին «Զվարթնոց» օդանավակայանում թույլ չեն տվել մեկնել ՀՀ-ից՝ պատճառաբանելով, թե նա մեղադրյալ է: Նույն օրը՝ երեկոյան, Արմեն Աշոտյանը հրավիրվել է ՀՀ ՔԿ, որտեղ նրան մեղադրանք է առաջադրվել՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ փողերի լվացման հատկանիշներով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը:

## ԻՆՔՆԱԹԻՌԻՑ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է ՀՀ

Ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում՝ ապրիլի 30-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռով վերադարձել եւ օդանավակայանում Արտաշատի բաժնի աշխատակիցներին է ներկայացել 44-ամյա Տիգրան Ս.-ն, որը ապրիլի 8-ից հետախուզվում էր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի (շորթումը) մեղադրանքով:

Խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նա ներկայացվել է Արարատի մարզային քննչական վարչություն:

ՇԱՏ ՀԱՐՑԵՐ՝ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ

# ԻՆՉԻ՞Ն ԵՆ ՍՊԱՍՈՒՄ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԸ

**Մայիսի 17-ին կլրանա 1 տոննա կոկաինի քրեական գործով քննության 1 տարին, ու մինչ օրս շատ հարցեր մնում են անպատասխան: Փաստ է մեկ բան, որ քրեական գործով անցնողները արդեն մեկ տարի է՝ տնային կալանքի տակ են, ու իրավապահները սպասում են Իտալիայից եւ Էկվադորից իրավական օգնության պահանջներին կատարման արդյունքներին:**

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ առեղծվածային պայմաններում Հայաստանում հայտնված 1 տոննա կոկաինի գործով՝ ԱԱԾ-ի կողմից մի շարք եվրոպական երկրներ նամակներ էին ուղարկվել, եւ կոնկրետ հարցադրումներ էին արվել. հիմա սպասում են կոնկրետ պատասխանների:

ArmLur.am-ին հատկապես հայտնի էր, թե ԱԱԾ-ն մասնավորապես որ երկրների իրավապահներին է դիմում ուղարկել: Կոնկրետ հարցեր են ուղարկվել Պանամայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության եւ Վրաստանի Հանրապետության իրավապահներին. իսկ ինչո՞ւ կոնկրետ այս երկրների իրավապահներին:

Բանն այն է, որ թմրամիջոցը Հայաստան էր ներմուծվել Էկվադորում գտնվող ընկերությունից պատվիրված ապրանքատեսակի հետ տարանցիկ երկրների՝ Պանամայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության եւ Վրաստանի տարածքով:

Հիշեցնենք, որ Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ, ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա.-ի եւ պահեստապետ Ս.Գ.-ի նկատմամբ, խմբի կազմում, նախնական համաձայնությամբ՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, մասնավորապես՝1 տոննա կոկաին ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Վերջիններիս նկատմամբ, որպես խափանման միջոց, ընտրվել է կալանքը. նախկին պատգամավորի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Հավելենք, որ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալներով՝ «Մրգենի» ՍՊԸ-ն հիմնադրվել է թավշյա հեղափոխությունից հետո՝ 2018 թվականի հուլիսի 27-ին: Ընկերության տնօրենը Ռուսաստանի քաղաքացի Լեւոն Աթաջանյանն է:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 30-ից մայիսի 2-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 161 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑ

ՀՅԴ Գերագույն մարմնի նախկին անդամ, ԱԺ նախկին պատգամավոր Սուրեն Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված է կալանքը. նա 2022 թվականի օգոստոսի 11-ից անազատության մեջ է: Ս. Մանուկյանը եւ 3 այլ անձինք մեղադրվում են գործարար, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավար Խաչատուր Քոքոբելյանի զառամյալ հորը առեւանգելու, նրան ազատ արձակելու համար գումար ստանալու գործով: Սուրեն Մանուկյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը՝ այն համարելով սարքովի, շինծու: Ս. Մանուկյանի պաշտպանները նշում են, որ 4 մեղադրյալներից միայն նրա նկատմամբ է կալանքը որպես խափանման միջոց կիրառվում, մեղադրյալներից մեկի հանդեպ որպես այլընտրանքային խափանման միջոց ընտրված է տնային կալանքը, մեկի ուրիշի նկատմամբ՝ բացակայելու արգելքը, իսկ չորրորդը այլ քրեական գործով դատապարտյալ է: Քրեական գործով բոլոր 4 մեղադրյալներին առաջադրված է նույն մեղադրանքը, սակայն Ս. Մանուկյանի հանդեպ վերաբերմունքն առանձնահատուկ է, ինչի պայմաններում նրա նկատմամբ կիրառվող խափանման միջոց կալանքը վերածվել է ազատազրկման ձեւով պատժի՝ դատավճռի բացակայության պարագայում: Ս. Մանուկյանի պաշտպան Սերգեյ Ոսկանյանը հայտնեց, որ ապրիլի 30-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Իջեւան քաղաքի նստավայրում կայացել է Սուրեն Մանուկյանի եւ մյուսների գործով դատական նիստ, որի ընթացքում հետազոտվել են քրեական գործով ապացույցներ, նաեւ քննվել է Ս. Մանուկյանի խափանման միջոց կալանքի երկարաձգման հարցը: Դատավոր Սասուն Միխիթարյանը որոշել է երեք ամսով երկարարաձգել Ս. Մանուկյանի կալանքի ժամկետը: Պաշտպան Ս. Ոսկանյանը հայտնեց, որ կալանքը երկարաձգելու որոշումը իրենք դատարանից դեռ չեն ստացել, որպեսզի իմանան, թե այս անգամ ինչ հիմքով է դատարանը երկարաձգել Ս. Մանուկյանի կալանքի ժամկետը:

## ՊՈԵՄ Է ՁՈՆԵԼ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Նախկինում՝ Տավուշի նախկին մարզպետ Արմեն Ղուլարյանի խորհրդական, ներկայումս կենսաթոշակառու իջեւանցի բանաստեղծ Լյուբիկ Չիբուխչյանը Բաքվում գերության մեջ գտնվող գործարար, Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանին նվիրված 307 էջանոց չափածո պոեմ է գրել, որը կոչել է «Արցախահայր»: Լ. Չիբուխչյանը հայտնեց, որ ինքը մտադիր է գրքի մի օրինակը, ռուսերեն ներածականով, ուղարկել Իլհամ Ալիեւին: Չիբուխչյանը կարծում է , որ Ռ. Վարդանյանին գերությունից ազատելու խնդիրը պետք է մշտապես հասարակական հնչեղություն ունենա. իր պոեմն էլ կնպաստի այդ գործին:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՇՔԵՂ ԵՎ ԱՉՔԱՏ

# ՕԴԱՅԻՆ ՃՐՋԱԳԱՅՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

**1950-ականներին սկսվեց օդային ճանապարհորդությունների ոսկե դարաշրջանը:**



Այդ ժամանակ օդային ճանապարհորդությունները աչքի էին ընկնում շքեղությամբ, նրբագեղությամբ ու էլիտար մթնոլորտով: Ի տարբերություն այսօրվա մարդաշատ տերմինալների քաշքշուկներին ու շտապողականությանը՝ 1950-ականներին ուղեւորները նախապես պատրաստվում էին թռիչքներին՝ հագնելով իրենց ամենալավ հագուստները: 1950-ականներին ինքնաթիռ նստելը նշանակում էր մուտք գործել նրբագեղության, շքեղության աշխարհ:

Օդային ճանապարհորդությունների ոսկե դարաշրջանը հաճախ հիշվում է՝ որպես գործին լավ չտիրապետող բորտուղեկցորդուհիների եւ ավիաընկերությունների ճոխ ճաշերի ժամանակաշրջան: Այնուամենայնիվ, դա ժամանակ էր, երբ ինքնաթիռ նստելու համար մարդիկ անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու կարիք չունեին, իսկ ինքնաթիռում ծխելը միանգամայն նորմալ էր համարվում:

Եվ քանի դեռ քաղաքացիական իրավունքների շարժումը թափ չէր առել, օդային ճանապարհորդությունները հիմնականում հասանելի էին սպիտակամորթ ուղեւորների համար, ինչը, իրականում, հեռու է «ոսկե դարաշրջանից»:

Օդային ճանապարհորդությունների ժամանակակից ուղեցույցներն ու կանոնները կարող են դժվարություններ առաջացնել, սակայն դրանք նախատեսված են ուղեւորներին անվտանգ պահելու համար:

1950-ականների ոսկե դարաշրջանում օդանավերն ավելի հարմարավետ էին ուղեւորների համար. նստատեղերն ու դրանց միջեւ տարածությունն ավելի լայն էր, եւ իսկայական ազատ տարածք կար, որտեղ կարելի էր հանգստանալ, քայլել: Այսօր ինքնաթիռները որոշակի ստանդարտներ ունեն. ավելի նեղ են եւ ամբողջ տարածքը զբաղեցնում են աթոռները՝ ապահովելով մի քանի անգամ ավելի նստատեղեր: Հենց այս փոփոխություններով պայմանավորված էլ ժամանակի ընթացքում թռիչքների համար նախատեսված տոմսերի արժեքը իջել է ՝հասանելի դառնալով հասարակության գրեթե բոլոր շերտերին:

Ոսկե դարաշրջանում մի շարք ինքնաթիռներ ունեին քնելու համար նախատեսված տարածքներ, որոնք կախված էին նստատեղերի վերեւում՝ փոխարինելով ճամպրուկների համար նախատեսված խցիկներին. այսպես հիմնականում ճանապարհորդում էին երեխաների հետ ինքնաթիռ բարձրացող ուղեւորները:

Անդրադառնալով ծխախոտի օգտագործմանը՝ պետք է նշել, որ դեռեւս նախորդ դարի կեսերին շատերը հասարակական վայրերում չէին ծխում, սակայն դա կտրուկ արգելված չէր:

Ժամանակին ծխելը թույլատրվում էր գրեթե ամենուր, այդ թվում՝ ինքնաթիռներում: Թեեւ սա կարող էր լուրջ խնդիր չլինել, սակայն, իհարկե, այն հաճելի չէր այն ճանապարհորդների համար, որոնք չէին ծխում:

Օդային ճանապարհորդությունների ոլորտում հեղափոխական էր 1964 թվականի քաղաքացիական անհնազանդությունը, որից հետո հաճախորդների միջեւ անհավասարությունը ու խտրականությունը սկսեցին կոտրվել եւ ինքնաթիռներով ճանապարհորդել սկսեցին նաեւ միջին խավի մարդիկ եւ սեւամորթները:

Բացի հասարակական մտածելակերպի փոփոխությունից, ժամանակի ընթացքում փոփոխվեց նաեւ ոլորտը. ինքնաթիռները դարձան ավելի որակյալ եւ ավելի արագընթաց: Օդանավակայանները հստակ կանոններ սահմանեցին, ձեւավորվեցին միջազգային չափորոշիչներ, որոնք պարտադիր են բոլոր միջազգային օդանավակայանների եւ դրանք սպասարկող ավիաընկերությունների համար:

*ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## Ր. ԳՐԵԳՈՐՅԱՆԸ՝ «ԱՎՐՈՐԱ»-Ի ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը հայտնել է, որ նախկին դիվանագետ եւ ռազմածովային ուժերի վետերան Րաֆֆի Գրեգորյանը, որը հայտնի է ԱՄՆ Պետդեպարտամենտում, ՆԱՏՕ-ում եւ ՄԱԿ-ում իր գործունեությամբ, միացել է «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության Տնօրենների խորհրդին. նախաձեռնություն, որի համահիմնադիրը նրա հայրն է՝ երջանկահիշատակ Վարդան Գրեգորյանը: Րաֆֆի Գրեգորյանը եղել է ՄԱԿ-ի ահաբեկչության դեմ պայքարի գրասենյակի ստեղծման ջատագովը՝2019 թ. դառնալով առաջին տնօրենը, միաժամանակ ծառայելով որպես Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Գլխավոր քարտուղարի տեղակալների կոմիտեում: Շուրջ 25 տարի հակամարտություններին եւ հետկոնֆլիկտային մարտահրավերներին առնչվող գործունեություն ծավալելուց հետո՝ Րաֆֆի Գրեգորյանը միանում է «Ավրորայի» Տնօրենների խորհրդին՝ ներդնելու իր փորձառությունը «Ավրորայի»՝ աշխարհը դրականորեն փոխելու ջանքերին: Գրեգորյանն ունի Ջոնս Հոփքինսի միջազգային առաջադիմական հետազոտությունների դպրոցի ռազմավարական գիտությունների դոկտորի աստիճան:

«Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը բարերարներ Վարդան Գրեգորյանի, Նուբար Աֆեյանի եւ Ռուբեն Վարդանյանի մարդասիրական ձեռնարկումն է, որն ստեղծվել է 2015 թվականին: «Ավրորան» ձգտում է լուծել մարդասիրական խնդիրներն աշխարհի տարբեր անկյուններում՝ տեղում օգնելով ամենակարիքավորներին: Այն օգնության ձեռք է մեկնել արդեն ավելի քան 3.2 միլիոն մարդու: Նախաձեռնության՝ իր բնույթով եզակի «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակն աջակցում է աշխարհի տարբեր անկյուններում մարդասիրական գործունեությամբ զբաղվող անհայտ հերոսներին, որոնք շոշափելի դրական փոփոխություն են իրականացնում ամենախոցելի համայնքներում: Առ այսօր «Ավրորան» նախաձեռնել է եւ աջակցել ավելի քան 427 նախագծի 56 երկրում եւ տարածքում:

««Ավրորան» աջակցում է մարդկանց, որոնք վտանգում են սեփական անձը, որպեսզի օգնության ձեռք մեկնեն ճնշվածներին, ձայնազուրկներին եւ անպաշտպաններին: Ես երախտապարտ եմ այս ջանքերին միանալու հնարավորության համար», - ասել է Րաֆֆի Գրեգորյանը: «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության 2024 թ. հատուկ միջոցառումները տեղի կունենան մայիսի 8-10-ը Լոս Անջելեսում՝ Կալիֆորնիայի համալսարանի «Խոստում» մարդու իրավունքների ինստիտուտի հետ համագործակցությամբ:

## ԿՍՏԵՂԾՎԻ ՔԿ ՓՈՐՁԱՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ կառավարության որոշմամբ կստեղծվի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի փորձաքրեագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն:

Կառավարության մայիսի 2-ի նիստում ընդունված որոշման նախագծի համաձայն՝կենտրոնը նախատեսվում է ստեղծել ՀՀ ներքին գործերի նախարարության փորձաքրեագիտական վարչության հենքի վրա:

● *Անցած 2 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 25 պատահար. 1 մարդ զոհվել է, 33-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

## ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖՈՐՈՒՄԻՆ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը, Սաուդյան Արաբիայի Թագավորության էկոնոմիկայի եւ պլանավորման նախարար Ֆեյսալ Ալ-Իբրահիմին եւ Համաշխարհային տնտեսական ֆորումի նախագահ Բյորգե Բրենդենի հրավերով, ապրիլի 27-29-ը Սաուդյան Արաբիայի Թագավորության մայրաքաղաք Ռիադում մասնակցել է «Համաշխարհային համագործակցությանը, տնտեսական աճին եւ զարգացման համար էներգետիկային» նվիրված հատուկ հանդիպմանը:

Հանդիպման ծրագրում ներառված երեք հիմնական թեմաներն էին՝ A compact for inclusive growth (Համաձայնություն ներառական աճի համար), Securing a development-positive energy transition (Զարգացում-դրական էներգետիկ անցման ապահովում) եւ Revitalizing global cooperation (Համաշխարհային համագործակցության ակտիվացում):

Նախարարի առաջին տեղակալը մասնագիտացված լսարանին է տրամադրել տեղեկատվություն՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի վերջին նորարարությունների ու զարգացումների վերաբերյալ, միջազգային գործընկերների հետ քննարկվել են երկկողմ համագործակցության հեռանկարները:

Այցի շրջանակում Գեւորգ Մանթաշյանը հանդիպում է ունեցել Սաուդյան Արաբիայի Թագավորության Մեդիայի նախարար Սալման բին Յուսեֆ Ալ Դոսարիի հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ ոլորտային համագործակցության հնարավորություններն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր: Կազմակերպվել է այց Սաուդյան Արաբիայի հանրային հեռուստաընկերություն, տեղի են ունեցել նաեւ մի շարք պաշտոնական հանդիպումներ, այդ թվում՝ Սաուդյան Արաբիայի կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների, էկոնոմիկայի եւ պլանավորման նախարարությունների, «Misk» հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

## ԼԱԶԵՐԱՅԻՆ ՇԱՐԺԻՉՈՎ ՍՈՒԶԱՆԱՎ

Չինական ռազմարդյունաբերական համալիրը մոտ է լազերային շարժիչով գերարագ սուզանավ ստեղծելուն:

Լազերը սուզանավերի շարժիչում կիրառելու գաղափարն առաջին անգամ մտահղացել են ճապոնացի գիտնականները դեռ 20 տարի առաջ: Դրա էությունն այն է, որ լազերները ստորջրյա պլազմա են գեներացնում՝ ստեղծելով պայթեցման ալիք, որն էլ ռեակտիվ շարժիչի արագությամբ ստորջրյա նավը շարժման մեջ է դնում: Այս տարիների ընթացքում ճապոնացիների չինացի գործընկերները հսկայական ջանքեր են գործադրել՝ փորձելով բացահայտել լազերային եզակի տեխնոլոգիայի գաղտնիքը: Եվ ահա, ըստ Հարբինի հետազոտողների, դա նրանց հաջողվել է:

Team Telecom Armenia

# «ԹՈՒՄՈՅԻ» ԳԼԽԱՎՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

**Team Telecom Armenia-ն կաջակցի «Թումոյի»՝ ժամանակակից տեխնոլոգիական կրթությունը Հայաստանի բոլոր դպրոցներին հասանելի դարձնելու առաքելությանը: Team-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը եւ «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Մարի Լու Փափազյանը «Թումո» Երեւանում ստորագրեցին հուշագիր, ըստ որի՝ ընկերությունը 50% զեղչով ինտերնետ կտրամադրի Հայաստանում գործող եւ հետագայում բացվող «Թումո» կենտրոններին ու տուփերին՝ հետագայում անվճարի անցնելու պայմանով:**



Նորագույն NGN ցանցի շնորհիվ, որը կառուցվում է Հայաստանի ողջ տարածքում, Team-ը կկարողանա տրամադրել գերարագ ինտերնետ «Թումո» ուսանողների կրթական գործընթացն անխափան իրականացնելու համար:

Կարեւորելով այս համագործակցության մեկնարկը՝ Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը շեշտեց, որ կրթության ու տեխնոլոգիաների ոլորտներին աջակցելն իրենց համար առաջնահերթություն է:

«Team-ն ու «Թումոն» ունեն նույն առաքելությունը, բայց տարբեր ոլորտներում: Մեր դեպքում՝ Հայաստանի բոլոր բնակիչներին որակյալ ու գերարագ ինտերնետի, իսկ «Թումոյի» դեպքում՝ ժամանակակից տեխնոլոգիական կրթության ապահովումն է: Միավորելով մեր ուժերը՝ նպաստելու ենք Հայաստանի բոլոր մարզերի պատանիների կրթության որակի բարձրացմանը, ինչպես նաեւ համայնքների ակտիվացմանը»:

Այս պահին Team-ի գերարագ ինտերնետով են ապահովվում 10 «Թումո» տեղանքներ՝ կենտրոններ ու տուփեր: Ինտերնետի տրամադրման գործընթացը լինելու է շարունակական՝ ընդգրկելով «Թումո Հայաստան» նախագծի շրջանակում բացվող բոլոր «Թումո» կենտրոններն ու տուփերը:

«Մասնավոր սեկտորի ներգրավվածությունը կրթության զարգացման գործում նույնքան կարեւոր է, որքան ինտերնետը՝ 21-րդ դարի կրթության կազմակերպման համար: Համոզված եմ, որ այս եւ նման համագործակցությունների շնորհիվ, մեկ օր առաջ կկարողանանք ապագայի հմտությունները հասանելի դարձնել Հայաստանի բոլոր պատանիների համար», - նշեց «Թումոյի» տնօրեն Մարի Լու Փափազյանը:

Շարունակելով իրագործել Հայաստանի ողջ տարածքում նորարարական կրթության հավասար հասանելիության ապահովման իր նպատակը՝ «Թումոն» նախատեսում է 16 կենտրոնից եւ 110 տուփից բաղկացած ցանց կառուցել՝ ապահովելով յուրաքանչյուր շաբաթ 80,000 պատանիների կրթական առօրյան ծրագրի շրջանակում:

Բացի դրանից, հուշագիրը համագործակցություն է սահմանում ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Թումո լաբեր» նախագծի եւ «42 Երեւան» ծրարգրավորման դպրոցի հետ, որի շրջանակում Team-ի մասնագետները կիրականացնեն կրթական հանդիպումներ եւ ծրագրեր այս նախագծերում ներգրավված ուսանողների հետ:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը անվճար արտադպրոցական ծրագիր է՝ նախատեսված պատանիների համար: «Թումոյի» կրթական փորձառության շրջանակներում ուսանողները՝ ինքնուսուցման, դասընթացների եւ աշխատարանների վրա հիմնված հատուկ կրթական համակարգի միջոցով հմտանում են տեխնոլոգիաների եւ դիզայնի ոլորտներում՝ ծրագրավորումից, ռոբոտաշինությունից եւ խաղերի ստեղծումից մինչեւ ֆիլմերի ստեղծում, անիմացիա, երաժշտություն եւ այլն: Ծրագրին կարող է միանալ 12-18 տարեկան ցանկացած երիտասարդ:

2011-ից՝ ստեղծումից ի վեր, Հայաստանում հիմնվել են շուրջ 35 «Թումո» կենտրոններ եւ տուփեր, ուր հաճախում են ավելի քան 25,000 պատանիներ: Ծրագիրը ընդլայնվել է արտերկրում. «Թումո» կենտրոններ են գործում Գերմանիայում, Ֆրանսիայում, Պորտուգալիայում, Ալբանիայում, Ուկրաինայում, մոտ ապագայում սպասվում է կենտրոնների բացում Նիդերլանդներում եւ ԱՄՆ-ում:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ Է ԳՈՐԾՈՒՄ

Դեղագործության ոլորտում արտադրության խթանման, արտադրության ծախսերի նվազեցման, արտադրանքի տեսականու ընդլայնման նպատակով գործում է Հայաստանի Հանրապետությունում կլինիկական փորձարկումների, կենսահամարժեքության հետազոտությունների իրականացման փոխհատուցման ծրագիրը: Այս մասին իրազեկում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

Ծրագրով ՀՀ կառավարությունը տրամադրում է ՀՀ-ում արտադրվող դեղերի կլինիկական փորձարկումների եւ (կամ) կենսահամարժեքության հետազոտությունների ծախսերի մասնակի փոխհատուցում: Դեղագործության ոլորտի տնտեսվարողներին փոխհատուցումը կտրամադրվի՝

1. կլինիկական փորձարկումների ծախսերի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր հետազոտության համար 25 մլն դրամ.

2. կենսահամարժեքության հետազոտությունների ծախսերի 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր հետազոտության համար 30 մլն դրամ:

## ՈՍԿԻՆ ԵՎ ԱՐԾԱԹԸ ԹԱՆԿԱՑԵԼ ԵՆ

NYMEX բորսայի մայիսի 1-ի առեւտրային նստաշրջանի արդյունքում սահմանվել են ոսկու, արծաթի եւ պլատինի գները:

Ոսկու գինն աճել է 1.49 տոկոսով եւ կազմել 2328.70 դոլար, արծաթի գինն աճել է 0.56 տոկոսով եւ կազմել 26.82 դոլար, իսկ պլատինի գինն աճել է 2.38 տոկոսով եւ կազմել 967.40 դոլար:

Չափման միավորը 1 տրոյական ունցիան է (31.1 գրամ):

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆ

# ՆՎԻՐՅԱԼ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

**Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյան. անուն, որը վերջին շաբաթներին հայտնվել է լրահոսի առաջին էջերին, քաղաքական գործիչների ելույթներում, ժողովրդի սրտում եւ մտքում:**



Ո՞վ է նա եւ ի՞նչ ճանապարհ է անցել:

Հենց այս հարցերի պատասխաններին ու Հայ Առաքելական եկեղեցու կարգ ու կանոնին անտեղյակ լինելուց էլ առաջ են գալիս խոսակցություններ, որոնք որեւէ աղերս չունեն իրականության հետ:

Հակառակ տարաբնույթ խոսակցություններին՝ Բագրատ սրբազանը ծնվել է Հայաստանում՝ Գյումրիում, 1971 թվականին: 1994 թվականին ավարտել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, ապա ուսումը շարունակել Մեծ Բրիտանիայում՝ ավարտելով Լիդսի համալսարանն ու բակալավրի աստիճան է ստացել Մըրֆիլդի Սուրբ Հարության աստվածաբանական քոլեջից:

2012 թվականին ավարտել է Մոնրեալի Քոնքորդիա համալսարանը եւ ստացել աստվածաբանության եւ կենսաբանական բարոյագիտության մագիստրոսի կոչում՝ պաշտպանելով «Հայաստանի Առողջապահական համակարգը. պատմական, սոցիալական եւ աստվածաբանական եզրաշերտը, անցյալը ներկան եւ ապագայի զարգացման հեռանկարը» վերնագրով թեզ:

Առաջին եկեղեցական ձեռնադրությունը եղել է 1994 թվականին՝ Տ. Անանիա եպիսկոպոս Աբաջյանի ձեռամբ համալրել է Մայր Աթոռի սարկավագաց դասը եւ մեկ տարի անց ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Եպիսկոպոսի աստիճան ստացել է 2003 թվականին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնադրությամբ, ապա 2023 թվականին՝ Կաթողիկոսի Հայրապետական կոնդակով արժանացել արքության պատվի:

Իր գործունեության ընթացքում եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի գլխավոր խմբագիր, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գավազանակիր, Հայաստանում Քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի միջոցառումների կազմակերպման կենտրոնական մարմնի անդամ, Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի տեսուչ, Մայր Աթոռի մամուլի, լրատվության եւ Հասարակական կապերի գրասենյակի տնօրեն, ինչպես նաեւ «Շողակաթ» հեռուստաընկերության տնօրենների խորհրդի նախագահ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն:

Դասախոսել է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ Վազգենյան դպրանոցում, 2002-ից 2003 թվականներին եղել է Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահը, իսկ 2003-ից 2013 թվականներին՝ Կանադայի հայոց թեմի առաջնորդը:

2015 թվականից առաջնորդում է Հայ Առաքելական եկեղեցու Տավուշի թեմը եւ 2017 թվականից անդամակցում Գերագույն հոգեւոր խորհրդին:

2013 թվականին հրատարակել է «Ավետյաց երկրի տեսիլքով» գիրքը:

Սրբազանի թե՛ գիտական ճանապարհը, թե՛ գործունեությունը ծավալուն են, որի ընթացքում հասցրել է վաստակել հավատավորների սերն ու ջերմությունը: Այսօր Տավուշում մեկնարկած շարժման առաջամարտիկը դարձած Բագրատ սրբազանը Հայ Առաքելական եկեղեցու պատմության մեջ հայտնի ամենանվիրյալ եւ մաքուր հոգեւորականներից է, որի անունը շահարկել ու կեղտոտ խաղերում ընդգրկելը անընդունելի է:

Վերջին օրերին, սակայն, բազմաթիվ իշխանական ուժեր եւ գործիչներ ամենակեղտոտ ձեւով զրպարտում են սրբազանին, վիրավորանքներ հնչեցնում նրա հասցեին:

« Ձեզ մխրճել են այնպիսի գործընթացի մեջ, որը վճռական է բոլորիս համար: Հանկարծ չդժգոհեք երեկվա ընդվզումից, գիտեմ, թե ինչպիսի ծանր հոգեվիճակում եք: Մենք գնահատում ենք ձեր ծառայությունը, բայց վերանայեք, թե դուք ում եք ծառայում: Ով ուզում է լինի, իրավունք չունի սպառնալ իմ ժողովրդին: Ձեզ պահեք ձեր պատկերացրած տղամարդուն վայել, դուք ծառայության մեջ եք, ծառա չեք: Քանի դուք կրկնելու եք այդ գործողությունները, մենք կանգնելու ենք ձեր դիմաց, ուղիղ ձեր դիմաց: Մեզ ոչինչ չի հետաքրքրում, չեք կարող մեզ վախեցնել: Դուք մոնղոլ չեք, ոչ էլ արաբ, որ արշավանքներով գաք ու գնաք», - ապրիլի 27-ին ոստիկանների եւ տավուշցիների միջեւ տեղի ունեցած բախումից հետո ոստիկաններին ասել էր Բագրատ սրբազանը:

*ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ*

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

## ՀԱՆԴԵՍ ԿԳԱՆ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

Կոմիտասի անվան ազգային քառյակը մայիսի 1-8-ը համերգներով հանդես է գալու Իտալիայում: Այս համերգները մեծ կարեւորություն ունեն, քանի որ հնարավորություն են ընձեռում կատարողական բարձր մակարդակով՝ եվրոպացի հանդիսատեսին ներկայացնել հայկական ազգային երաժշտությունը:

Հատկանշական է, որ այս տարի լրանում է Կոմիտաս Վարդապետի 155-ամյակը եւ Կոմիտասի անվան ազգային քառյակի հիմնադրման 100-ամյակը:

Կոմիտասի անվան ազգային քառյակը մայիսի 1-ին ելույթ ունեցավ Փատովայի «Ալթինաթե» սրահում: Մայիսի 3-ին՝ Վենետիկի Teatro Carlo Goldon սրահում, մայիսի 5-ին՝ Ս. Ղազարի մայրավանքում: Իսկ մայիսի 7-ին ՀԱԵ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության հրավերով Կոմիտասի անվան ազգային քառյակը ելույթ է ունենալու Միլանի հռչակավոր «Սանտա Մարիա դելլա Գրացիե» (Santa Maria delle Grazie) եկեղեցում:

Քառյակը ելույթ կունենա՝ կատարելով հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

## ԱՐՑԱԽՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստան տեղահանված արցախցի երեխաների համար կկազմակերպվեն համերգներ ու այլ մշակութային միջոցառումներ:

«Հաղորդակցության զարգացման միջազգային ինստիտուտ» հումանիտար հիմնադրամը համագործակցության հուշագիր է ստորագրել Հադրութում գործունեություն իրականացնող «Դիզարտ» մշակութային հասարակական կազմակերպության հետ՝ հադրութցի փոքրիկների համար տարբեր խմբակներ կազմակերպելու, ինչպես նաեւ համերգներ ու այլ միջոցառումներ իրանացնելու ուղղությամբ:

«Համագործակցության ծրագրերն ուղղված են լինելու պարի, երգի, բարբառի ուսուցմանն ու զարգացմանը: Ժամանակին Հադրութում կազմակերպությունն իրականացրել է տարաբնույթ մշակութային միջոցառումներ: Այժմ մեր հիմնադրամի կողմից այդ նախաձեռնություններն աջակցություն են ստացել Երեւանում: Այս պահին 33 երեխա հնարավորություն կստանա օգտվելու նման հնարավորությունից: Հետագայում կաշխատենք ընդլայնել մասնակից երեխաների թիվը», - նշել են «Հաղորդակցության զարգացման միջազգային ինստիտուտ» հումանիտար հիմնադրամի ներկայացուցիչները:

ՄԱՐԶԱԿԱՆ

## «ԲՈՐՈՒՍԻԱ»-Ն ՀԱՂԹԵԼ Է ՊՍԺ-ԻՆ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացավ կիսաեզրափակչի հերթական հանդիպումը:

Դորտմունդի «Բորուսիա»-ն սեփական հարկի տակ ընդունելով Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ին՝ առավելության հասավ նվազագույն հաշվով: Գերմանական թիմի կազմում աչքի ընկավ Նիկլաս Ֆյուլկրուգը:

Թիմերի պատասխան հանդիպումը կկայանա մայիսի 7-ին:

Նախօրեին կայացած կիսաեզրափակչում՝ «Բավարիա»-«Ռեալ», գրանցվել էր ոչ-ոքի՝ 2:2 հաշիվ:

## «ՊԱՐՄԱՆ» ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

«Պարման» Իտալիայի Բ Սերիայի 36-րդ տուրի խաղում ոչ-ոքի խաղաց «Բարիի» հետ. հանդիպումն ավարտվեց 1-1 հաշվով:

Այսպիսով՝ «Պարման» մրցաշրջանի վերջում երաշխավորեց նվազագույնը երկրորդ տեղը մրցաշարային աղյուսակում:

Այժմ «Պարման» 74 միավորով գլխավորում է երկրորդ լիգան:

Երեք տարի անց «Պարման» կվերադառնա իտալական Ա Սերիա: Թիմը 2020/21 մրցաշրջանում դուրս էր մնացել բարձրագույն լիգայից:

## «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՄԵՐԳ»

Կանադայի Մոնրեալ քաղաքում ապրիլի 28-ին առաջին անգամ հնչեց հայ անվանի կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանի եւ Լազար (Ղազարոս) Սարյանի չքնաղ երաժշտությունը «Գարնանային հիշատակի համերգ» խորագրով միջոցառմանը:

Այս համերգը մշակութային եւ երաժշտական համագործակցության արդյունք էր բրիտանահայ երաժիշտ մաեստրո Սիփան Օլահի եւ Մոնրեալի ՀԲԸՄ-ի միջեւ: Համերգի ամբողջ ծրագիրը կազմել էր միջոցառման գեղարվեստական ղեկավար Սիփան Օլահը՝ ներառելով երկու կոմպոզիտորների մի շարք ստեղծագործություններ, որոնք Մոնրեալում հնչել են առաջին անգամ: Փայլուն կատարումներով հանդես են եկել Սիփան Օլահը (տենոր, դիրիժոր, Լոնդոն), Հայարփի Եղիկյանը, Հակոբ Մուրադյանը, Խաչատուր Ղազարյանը, ինչպէս նաեւ Ռապսոդի լարային քառյակը Մոնրեալից:

Ծրագրում ընդգրկված են եղել Սպենդիարյանի Երեւանյան էսքիզներից «Էնզելին», Ղրիմյան էսքիզներից «Ղայթարման», Սարյանի «Ադաջիո եւ Պար» ստեղծագործությունները, Սիմֆոնիկ Սերենադից՝ «Սերենադ» առաջին մասը, մի շարք գործիքային անսամբլային ստեղծագործություններ, ինչպես նաեւ երկու կոմպոզիտորների լիրիկական ռոմանսները: ՀԲԸՄ-ի Մոնրեալի գործադիր կոմիտեն իր գոհունակությունն է հայտնել բոլոր երաժիշտներին, հանձին մաեստրո Սիփան Օլահի՝ Ալեք Մանուկյան կենտրոնում դասական երաժշտության նման հեղինակավոր եւ պրոֆեսիոնալ միջոցառում ներկայացնելու համար:

*● Մայիսի 4-ին՝ ժամը 15:00-ին, Պատանի հանդիսատեսի թատրոնում կցուցադրվի «Ջրահարսը» մանկական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

## ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Հաշմանդամ երեխային կամ 1-ին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվո՞ւմ է աշխատանքային ստաժում: Եվ կցանկանայի նաեւ տեղեկանալ՝ երեխային խնամելու ժամանակահատվածը ինչպես է հաշվառվում աշխատանքային ստաժում:**

*Երանուհի Հակոբյան (32 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ե. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում հաշմանդամ երեխայի խնամակալության ժամանակաշրջանը մինչեւ երեխայի 18 տարին լրանալը կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի, որդեգրողի, խնամակալի աշխատանքային ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, իսկ խնամակալի դեպքում՝ նաեւ խնամակալ ճանաչված լինելու եւ խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի՝ մինչեւ կենսաթոշակ նշանակելն ընկած ժամանակահատվածում:

Սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաեւ ծնողներից մեկի՝ մինչեւ յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի: Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

***Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ եթե ՀԿ-ն ֆիզիկական անձին կրթաթոշակ է տալիս, արդյոք եկամտային հարկի պարտավորություն առաջանում է, թե ոչ:**

*Մանվել Սիրադեղյան (52 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ**. Հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18 կետի համաձայն՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգեւոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված կրթաթոշակները, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ նշված հոդվածի 1-ին մասի 14-րդ եւ 15-րդ կետերում նշված կազմակերպությունները:

***ՀՀ պետական եկամուտների կոմիտե***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Այսինքն՝ ՀԿ-ի կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, եւ եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*



1994 թվականից ի վեր այսօր՝ մայիսի 3-ին նշվում է Մամուլի ազատության միջազգային օրը (World Press Freedom Day): Նախաձեռնությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովինն է: ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան այն տոն է հռչակել 1993-ին:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:


2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:


## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________
Ազգանուն՝ ______________
Առաքման հասցե՝ ______________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ______________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*


## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| | Շիրակ | +6 +10<br>+12 +15 |
| | Կոտայքի լեռներ | +6 +9<br>+12 +14 |
| | Կոտայքի նախալեռներ | +11 +13<br>+14 +16 |
| | Գեղարքունիք | +4 +8<br>+9 +11 |
| | Լոռի | +6 +10<br>+12 +14 |
| | Տավուշ | +10 +15<br>+13 +16 |
| | Արագածոտնի լեռներ | +6 +8<br>+11 +13 |
| | Արագածոտնի նախալեռներ | +10 +14<br>+14 +18 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | +13 +15<br>+18 +20 |
| | Արմավիր | +11 +13<br>+18 +20 |
| | Վայոց ձորի լեռներ | +7 +9<br>+12 +14 |
| | Վայոց ձորի նախալեռներ | +12 +14<br>+17 +20 |
| | Սյունիքի հովիտներ | +13 +16<br>+18 +20 |
| | Սյունիքի նախալեռներ | +8 +12<br>+14 +17 |
| | ԼՂՀ | +9 +11<br>+13 +16 |
| | Երեւան | +15 +18<br>+20 +22 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*